ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2025թ. № 320

## ԹԱԴԵՎՈՍ ՌՈԲԵՐՏԻ ՄՈՒՂԴԵՍՅԱՆԻՆ ԵՎ ՆԱՐԻՆԵ ԿՈՐՅՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ 0,04000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2024 թվականի նոյեմբերի 18-ի վկայագրերը (գրանցված է սեղանամատյանում N 3085, 3086), Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06011KKXNGM3), «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Նարինե Կորյունի Հովհաննիսյանի (ծնված 28.11.1980 թ.) դիմումը և Թադևոս Ռոբերտի Մուղդեսյանի (ծնված 23.02.1996 թ.) ներկայացուցիչ Գարեգին Հովհաննեսի Էտիբարյանի համաձայնագիրը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0271-0289 և 06-006-0271-0001 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված 0,04000 հեկտար հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, ք. Սպիտակ, Ն. Աճեմյան փողոց, 1 հողամաս» հասցեն (փոստային դասիչ 1801):

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ.ապրիլի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2025թ. № 321

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-040-0105-0035 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,042 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2025 թվականի ապրիլի 10-ի ըստ օրենքի ժառանգության վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ 928), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06062ZRJJW9E) և Մանվել Մկրտչի Մելիքսեթյանի (ծնված՝ 27.10.1969թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրում գտնվող 06-040-0105-0035 կադաստրային ծածկագրով, 0,042 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Լեռնանցք, 12-րդ փողոց, 4-րդ փակուղի, 30 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1810):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 22

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2025թ. № 322

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-040-0124-0048 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,059 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2025 թվականի ապրիլի 10-ի ըստ օրենքի ժառանգության վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ 928), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06062T8TCQE4) և Մանվել Մկրտչի Մելիքսեթյանի (ծնված՝ 27.10.1969թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրում գտնվող 06-040-0124-0048 կադաստրային ծածկագրով, 0,059 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Լեռնանցք, 11-րդ փողոց, 2-րդ նրբանցքի 1-ին փակուղի, 3 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1810):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2025թ. № 323

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-040-0135-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,067 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2025 թվականի ապրիլի 10-ի ըստ օրենքի ժառանգության վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ 928), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06062JCXM4TC) և Մանվել Մկրտչի Մելիքսեթյանի (ծնված՝ 27.10.1969թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրում գտնվող 06-040-0135-0013 կադաստրային ծածկագրով, 0,067 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Լեռնանցք, 15-րդ փողոց, 1-ին նրբանցք, 6 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1810):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 22
ք.Սպիտակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2025թ. № 324

### ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-021-0059-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,138 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1010606 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060326P576MU) և Հասմիկ Վանիչկայի Աղաբեկյանի (ծնված՝ 26.12.1965թ.)դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրում գտնվող 06-021-0059-0012 կադաստրային ծածկագրով 0,138 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Արևաշող, 1-ին փողոց, 10 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1807):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 23

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2025 թվականի N 325

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 10-րդ և 21-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 20-ի թիվ 151 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2025 թվականի մայիսի 6-ին հայտարարված մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2025 թվականի ապրիլի 22-ի թիվ 221 զեկուցագիրը՝ ***որոշում եմ.***

1.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարել նոր մրցույթ, որը կանցկացվի 2025 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 14:30-ին:

2. Մրցույթն անցկացնել Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում:

3. Մրցույթի անցկացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել հայտարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք. Սպիտակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com


# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2025 թվականի N 326

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 10-րդ կետով, հաշվի առնելով, որ 2025 թվականի ապրիլի 15-ին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի ընթացքում հաղթող չի ճանաչվել՝ ***որոշում եմ.***

1.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարել մրցույթ, որը կանցկացվի 2025 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 14:30-ին:

2. Մրցույթն անցկացնել Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում:

3.Մրցույթի անցկացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել հայտարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2025թ. № 327

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-052-0087-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,125 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2025 թվականի ապրիլի 10-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերը (գրանցված են սեղանամատյաններում N 936, N 937), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06112CSUYQ8M) և Ռոլանդ Ռոլանդի Սարգսյանի (ծնված՝ 18.07.1996թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող 06-052-0087-0002 կադաստրային ծածկագրով 0,125 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 59,3 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Կաթնաջուր, 13-րդ փողոց, 1-ին փակուղի, 1 անասնաշենք» հասցեն (փոստային դասիչը՝ 1815):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2025թ. № 328

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 311 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հաշվի առնելով, որ համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 17-ի թիվ 311 որոշման մեջ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ՝ «0,039» թվի փոխարեն սխալմամբ գրվել է «0,037» թիվը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 17-ի «Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող 06-087-0054-0001 կադաստրային ծածկագրով 0,037 հեկտար մակերեսով հողամասին հասցե տրամադրելու մասին» թիվ 311 որոշման 1-ին կետում գրված «0,037» թիվը փոխարինել «0,039» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com


# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2025թ. № 329

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-040-0029-0013 ԵՎ 06-040-0029-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,13736 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հայաստանի հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06062WDNZTT8) և «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-040-0029-0013 և 06-040-0029-0015 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասերից առանձնացված 0,13736 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հաստատել Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-040-0029-0013 և 06-040-0029-0015 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերից առանձնացված 0,13736 հա մակերեսով հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Լեռնանցք, 9-րդ փողոց, 6 հողամաս» հասցեն (փոստային դասիչ 1810):

4. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ.ապրիլի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2025թ. № 330

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0096-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,19092 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0096-0010 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,19092 հեկտար մակերեսով արոտավայր հողատեսքի հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ.ապրիլի 23
ք.Սպիտակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2025թ. № 331

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԹԻՎ 20 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, հիմք ընդունելով «ՄԱՐԳԱՐՅԱՆՍ ԲԻԼԴԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 2025 թվականի ապրիլի 23-ին տրամադրված եզրակացությունը և Մկրտիչ Պառնագեսի Դարչինյանի (ծնված՝ 25.04.1958թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 9-ի թիվ 20 շինարարության թույլտվության մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ.

1) 6-րդ կետում գրված «06-006-0519-0006-001» թվերից հետո լրացնել «և 06-006-0519-0006-0002» բառը և թվերը,

2) «93,6 քմ» թվից և բառից հետո լրացնել «և 23 քմ» բառերն ու թիվը,

3) 6-րդ կետում գրված «մակերեսով» բառը փոխարինել «մակերեսներով» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 23 » ապրիլի 2025թ. № 332

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ ԾԱՂԻԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առիթով ծաղիկներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 102 500 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2025թ. № 333

## ՍԵՐԺԻԿ ՎՈԼՈԴԻ ԻՎԱՆՅԱՆԻՆ ՄԱՐԻԱՄ ՍԵՐԺԻԿԻ ԻՎԱՆՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 37-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հիմք ընդունելով Սերժիկ Վոլոդի Իվանյանի դիմումը, թիվ ԼԴ/2661/02/21 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ապրիլի 8-ի վճիռը, Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 25-ի եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Սերժիկ Վոլոդի Իվանյանին (ծնված 23.11.1958թ.) նշանակել Մարիամ Սերժիկի Իվանյանի (ծնված 23.03.2002թ.) խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք. Սպիտակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2025թ. № 334

## ԱԼԲԵՐՏ ԳԵՎՈՐԳԻ ԱՊԻՐԿՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ՌԱԶՄԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ՌԱԴԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԱՊՐԻԿՅԱՆԻՆ ԵՎ ՌՈԲԵՐՏ ԱԼԲԵՐՏԻ ԱՊՐԻԿՅԱՆԻՆ ՀՈՂԻ (ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ) ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածով, հիմք ընդունելով տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքները, հաշվի առնելով, որ Ալբերտ Գևորգի Ապիրկյանը, Արմենուհի Ռազմիկի Ղազարյանը, Ռադիկ Ալբերտի Ապրիկյանը և Ռոբերտ Ալբերտի Ապրիկյանը, հանդիսանալով հողի (անշարժ գույքի) հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չեն կատարել իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-052-0120-0021, 06-052-0079-0004, 06-052-0129-0012 և 06-052-0102-0019 կադաստրային ծածկագրերով հողամասերի 2008-ից 2024 թվականների հողի (անշարժ գույքի) հարկը վճարելու պարտավորությունը՝ ***որոշում եմ.***

1. Ալբերտ Գևորգի Ապիրկյանից, Արմենուհի Ռազմիկի Ղազարյանից, Ռադիկ Ալբերտի Ապրիկյանից և Ռոբերտ Ալբերտի Ապրիկյանից հօգուտ Սպիտակ համայնքի գանձել **երկու հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր յոթանասունութ** ՀՀ դրամ, որից՝

1) 06-052-0120-0021 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **հարյուր ութ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **վաթսունութ հազար յոթանասունինը** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **քառասուն հազար վեց հարյուր իննսունվեց** ՀՀ դրամ.

2) 06-052-0079-0004 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **տասնմեկ հազար երկու հարյուր վաթսունմեկ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **հինգ հազար հինգ հարյուր վաթսունութ** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **հինգ հազար երեք հարյուր տասը** ՀՀ դրամ.

3) 06-052-0129-0012 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **ութսուն ինը հազար ութ հարյուր յոթ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **հիսունյոթ հազար հարյուր քսան չորս** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **երեսուն երկու հազար վեց հարյուր ութսուներեք** ՀՀ դրամ.

4) 06-052-0102-0019 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **յոթանասութ հազար երեսունհինգ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **քառասունհինգ հազար ինը հարյուր քառասուներկու** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **երեսուներկու հազար իննսուն երեք** ՀՀ դրամ:

2. Սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Ալբերտ Գևորգի Ապիրկյանին, Արմենուհի Ռազմիկի Ղազարյանին, Ռադիկ Ալբերտի Ապրիկյանին և Ռոբերտ Ալբերտի Ապրիկյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում, այն ենթակա է կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2025թ. № 335

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂԻՇԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ԼԵՌՆԻԿԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ, ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածով, հիմք ընդունելով տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքները, հաշվի առնելով, որ Հովհաննես Բաղիշի Հովհաննիսյանը, Գայանե Լեռնիկի Նիկողոսյանը, Արամ Հովհաննեսի Հովհաննիսյանը և Կարեն Հովհաննեսի Հովհաննիսյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չեն կատարել իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-052-0079-0003, 06-052-0084-0003, 06-052-0128-0251, 06-052-0114-0001, 06-052-0111-0021, 06-052-0107-0033 կադաստրային ծածկագրերով հողամասերի 2008-ից 2024 թվականների հողի հարկը (անշարժ գույքի հարկ) վճարելու պարտավորությունը՝ ***որոշում եմ.***

1. Հովհաննես Բաղիշի Հովհաննիսյանից, Գայանե Լեռնիկի Նիկողոսյանից, Արամ Հովհաննեսի Հովհաննիսյանից և Կարեն Հովհաննեսի Հովհաննիսյանից հօգուտ Սպիտակ համայնքի գանձել **երեք հարյուր տասնութ հազար յոթ հարյուր քառասունյոթ** ՀՀ դրամ, որից՝

1) 06-052-0079-0003 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **ինը հազար հարյուր իննսունվեց** ՀՀ դրամ, որից ապառք՝ **հինգ հազար հինգ հարյուր իննսուներեք** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **երեք հազար վեց հարյուր երեք** ՀՀ դրամ.

2) 06-052-0084-0003 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **տասնհինգ հազար ութ հարյուր երեսունութ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **ութ հազար վեց հարյուր քսանութ** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **յոթ հազար երկու հարյուր տասը** ՀՀ դրամ.

3) 06-052-0128-0251 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **քսանվեց հազար յոթանասունչորս** ՀՀ դրամ, որից ապառք՝ **տասնյոթ հազար հինգ հարյուր երեսունհինգ** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **ութ հազար հինգ հարյուր երեսունինը** ՀՀ դրամ.

4) 06-052-0114-0001 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **հարյուր վաթսուն հազար վաթսունմեկ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **հարյուր չորս հազար չորս հարյուր տասը** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **հիսունհինգ հազար վեց հարյուր հիսունմեկ** ՀՀ դրամ.

5) 06-052-0111-0021 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **հիսուն հազար վեց հարյուր իննսուն** ՀՀ դրամ, որից ապառք՝ **երեսուներեք հազար երկու հարյուր քառասուն** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **տասնյոթ հազար չորս հարյուր հիսուն** ՀՀ դրամ.

6) 06-052-0107-0033 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **հիսունվեց հազար ութ հարյուր ութսունութ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **երեսունութ հազար ութ հարյուր երեք** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **տասնութ հազար ութսունհինգ** ՀՀ դրամ:

2. Սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Հովհաննես Բաղիշի Հովհաննիսյանին, Գայանե Լեռնիկի Նիկողոսյանին, Արամ Հովհաննեսի Հովհաննիսյանին և Կարեն Հովհաննեսի Հովհաննիսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում, այն ենթակա է կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2025թ. № 336

# ՍՈՒՍԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-006-0481-0015 ԵՎ 06-006-0481-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,06000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09032021-06-0030 վկայականը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Սուսաննա Թադևոսի Մկրտչյանի (ծնված՝ 02.01.1947թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սուսաննա Թադևոսի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0481-0015 և 06-006-0481-0016 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,06000 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2025 թ. № 337

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՀԱՐԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-097-0145-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,0300 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշման թիվ 1 հավելվածի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հաշվի առնելով որ համաձայն գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների վերաբերյալ) ԱՏ-02122020-06-0631 տեղեկանքի կադաստրային քարտեզում 06-097-0145-0005 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը գյուղատնտեսական այլ հողատեսք է իսկ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02122020-06-0024 վկայականով 06-097-0145-0005 կադաստրային ծածկագրով հողամասը հանդիսանում է վարելահող, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02122020-06-0024 վկայականը և Արմեն Լուքսենի Հալաջյանի (ծնված 16.02.1972 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրում գտնվող 06-097-0145-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի հողամասից առանձնացված 0,0300 մակերեսով հողամասի հողատեսքը փոփոխել 4-րդ կարգի ջրովի վարելահող հողատեսքի:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 25

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» ապրիլի 2025թ. № 338

# ՌԱՖԻԿ ՍԼԱՎԻԿԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածով, հիմք ընդունելով տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքները, հաշվի առնելով, որ Ռաֆիկ Սլավիկի Դանիելյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել իրեն սեփականության իրավունքով պատկանող «MERCEDES-BENZ C 300» մակնիշի փոխադրամիջոցի (հաշվառման համարանիշ՝ 36GX760) 2019-ից 2024 թվականների գույքահարկը վճարելու պարտավորությունը, ինչպես նաև VAZ 21214 մակնիշի փոխադրամիջոցի (հաշվառման համարանիշ՝ 07UU088) 2020-ից 2024 թվականների գույքահարկը վճարելու պարտավորությունը՝ ***որոշում եմ.***

1. Ռաֆիկ Սլավիկի Դանիելյանից հօգուտ Սպիտակ համայնքի գանձել **հինգ հարյուր քառասունմեկ հազար հարյուր ութսունչորս** ՀՀ դրամ, որից՝

1) «MERCEDES-BENZ C 300» մակնիշի փոխադրամիջոցի գույքահարկ՝ **հինգ հարյուր մեկ հազար երկու հարյուր քառասունվեց** ՀՀ դրամ, որից ապառք՝ **չորս հարյուր հազար ութ հարյուր** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **հարյուր հազար չորս հարյուր քառասունվեց** ՀՀ դրամ.

2) VAZ 21214 մակնիշի փոխադրամիջոցի (հաշվառման համարանիշ՝ 07UU088) գույքահարկ՝ **երեսունինը հազար ինը հարյուր երեսունութ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **երեսուներկու հազար չորս հարյուր** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում

չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **յոթ հազար հինգ հարյուր երեսունութ** ՀՀ դրամ:

2. Սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Ռաֆիկ Սլավիկի Դանիելյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում, այն ենթակա է կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք. Սպիտակ